

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Մայիս 3, 2020

SUNDAY, May 3, 2020

9215 SE Church St., Clackamas, OR 97015

ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Յովհաննէս 5:19-30

Յիսուս ասաց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, մարդու Որդին ինքն իրենից ոչինչ չի կարող անել, այլ անում է այն, ինչ տեսնում է, թէ Հայրը կատարում է, որովհետեւ ինչ որ Հայրն է անում, նոյնը նրա նման եւ Որդին է գործում, քանի որ Հայրը սիրում է Որդուն, եւ այն ամէնը, ինչ ինքն է անում, ցոյց է տալիս նրան. եւ նրան ցոյց կը տայ սրանից շատ աւելի մեծ գործեր, որոնց վրայ դուք կը զարմանաք. որովհետեւ, ինչպէս որ Հայրը յարութիւն է տալիս մեռելներին եւ կենդանացնում է, նոյնպէս եւ Որդին կենդանացնում է՝ ում կամենայ: Սակայն Հայրը ոչ մէկին չի դատում, այլ ամէն դատաստան տուել է իր Որդուն, որպէսզի ամէնքը պատուեն Որդուն, ինչպէս պատում են Հօրը: Ով Որդուն չի պատում, չի պատում եւ Հօրը՝ նրան առաքողին: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ, ով իմ խօսքը լսում է ու հաւատում է նրան, ով ինձ առաքեց, ընդունում է յաւիտենական կեանքը եւ չի դատապարտում, այլ մահուանից կեանք անցաւ: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ կը գայ ժամանակ, եւ արդէն իսկ եկել է, երբ մեռելները կը լսեն Աստծու Որդու ձայնը, եւ նրանք, որ կը լսեն, կ'ապրեն, որովհետեւ, ինչպէս Հայրն ինքն իր մէջ կեանք ունի եւ կեանք է տալիս, նոյնպէս եւ Որդուն տուեց ինքն իր մէջ կեանք ունենալ եւ տալ: Եւ նրան իշխանութիւն տուեց որոտաստան անելու, քանի որ մարդու Որդի է. դրա վրայ ինչ որ էք զարմանում, որովհետեւ կը գայ ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կը լսեն նրա ձայնը եւ դուրս կը գան. ովքեր բարի գործեր են արել՝ կեանքի յարութեան համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի յարութեան համար: Եւ ինքս ինձնից ոչինչ անել չեմ կարող, այլ, ինչպէս լսում եմ Հօրից՝ դատում եմ, եւ իմ դատաստանը արդար է, որովհետեւ ոչ թէ իմ կամքն եմ որոնում, այլ նրա կամքը, ով ինձ առաքեց»:




GOSPEL READING

John 5:19-30

Then Jesus answered and said to them, “Most assuredly, I say to you, the Son can do nothing of Himself, but what He sees the Father do; for whatever He does, the Son also does in like manner. For the Father loves the Son, and shows Him all things that He Himself does; and He will show Him greater works than these, that you may marvel. For as the Father raises the dead and gives life to them, even so the Son gives life to whom He will. For the Father judges no one, but has committed all judgment to the Son, that all should honor the Son just as they honor the Father. He who does not honor the Son does not honor the Father who sent Him.

“Most assuredly, I say to you, he who hears My word and believes in Him who sent Me has everlasting life, and shall not come into judgment, but has passed from death into life. Most assuredly, I say to you, the hour is coming, and now is, when the dead will hear the voice of the Son of God; and those who hear will live. For as the Father has life in Himself, so He has granted the Son to have life in Himself, and has given Him authority to execute judgment also, because He is the Son of Man. Do not marvel at this; for the hour is coming in which all who are in the graves will hear His voice and come forth—those who have done good, to the resurrection of life, and those who have done evil, to the resurrection of condemnation. I can of Myself do nothing. As I hear, I judge; and My judgment is righteous, because I do not seek My own will but the will of the Father who sent Me.



ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տէրտէրեան



«Եղիցի լոյս»-ին աղբիւրն ես, Աստուած իմ ամենագոր, ու Քու յաւիտենական լոյսը անսպառ է եւ կենսարար: Քու լոյսիդ մէջ են բոլոր արարածներն անխտիր: Ինչքան հոգիս դէպի Քեզ կը փութայ, այնքան խաղաղ է հոգիս, այնքան հարուստ ու զուարթ: Ու իմ հոգիին խորքին եմ ամրագրած անունդ՝ ահե՛ղ Աստուած բազմագոր:

Զուարթոնց յաւերժական տաճարի պսակն ես Տէ՛ր Աստուած Քու անտեսանելի ներկայութեամբդ: Հայրենիքիս Զուարթոնցի Տաճարին քարերուն մէջէն կը լսեմ ձայնդ երփներանգ, որ կը հմայէ ինձ եւ բոլոր անոնց, որոնք Քեզի կը դիմեն ու աղօթք մըն ալ իրենք կը դրոշմեն սրբատաշ քարերուն: Ու ամէն աղօթք Քու փրկչական հաւատքի նոր կայծ մըն է հոգիներէն ներս: Սիրով ու երկիւղած քայլերով մեր խնկաբոյր տաճարներու միջով դէպի Քեզ կու գանք Աստուած յաւիտենական:

PRAYER

By Archbishop Hovnan Derderian



“Let there be light,” you commanded, Almighty God; in your Light, the whole world turns into light. You are the fountain of light, my Lord God. Your eternal light is exhaustible and life-giving. The closer my soul is to you, the more peaceful it is, much richer and joyful. Your awe-inspiring name is inscribed in my soul, O Most

Merciful God.

You are the crown of the Temple of Angeles (*Zvartnots*), My Lord, God, through your invisible presence. I hear your sweet voice through the stones, which embraces me and all those who beseech you and place a prayer on the holy stones of the Church of Zvartnots. And every prayer is a new spark of faith in the hearts of all people, who, with love and fear, feel a new unity with you, O Eternal God.

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Այս կիրակին կոչուում է Կարմիր, քանզի Եկեղեցին ոռոգուում է ու ծաղկում Քրիստոսի Արեամբ: Կարմիրը նաեւ մարտիրոսների հեղուած արիւնն է խորհրդանշում: Ըստ Յինանց կիրակիների կարգի՝ երրորդ կիրակի օրը հաստատուում է Քրիստոսի Եկեղեցին, իսկ չորրորդ կիրակի օրը ընդունուում են Եկեղեցու կարգերը: Այսօրուայ ընթերցուածուում Պետրոսը՝ որպէս Եկեղեցու տնտես, երէցներին պատուիրուում է, որ իւրաքանչիւրն ըստ իր շնորհների, բարութեամբ հովուի իրեն վստահուած հօտը: Ինչպէս Նոր կիրակի օրը Տէրը, ձեռնարկելով Եկեղեցու հաստատոււմը, հաստատեց առաքեալներին, նոյնպէս եւ այսօր հովիւներին հաստատելով՝ Եկեղեցին հաստատուած համարեց:

Ինչպէս քարերի մի շարքով տաճար չի կառուցուում, եւ մի ծաղկով գարուն չի գալիս, այդպէս էլ մի խումբ հովիւներով Եկեղեցին անխախտ չի պահուում: Աստուած Եկեղեցու մէջ կարգեց նախ առաքեալներին, ապա՝ մարգարէներին, այնուհետեւ՝ վարդապետներին, յետոյ՝ հովիւներին, որոնց Պետրոսը երիցակիցներ է կոչուում: Տէրը Եկեղեցին հաստատուն պահելու համար նրանուում միշտ վարդապետներ ու հովիւներ է կարգուում: Երբ ժողովուրդը հաճելի է Աստծուն, Աստուած նրանց մէջ բարի ու հանճարեղ մարդիկ է կարգուում, իսկ երբ ոչ իմաստուններին վերցնուում է ժողովրդի միջից: Ինչպէս քանոնի ծուռելով ծուռուում է գիծը, այնպէս էլ քահանայապետի վարքի կամ դաւանութեան ծուռելով ծուռուում է եւ ժողովուրդը: Եւ ինչպէս մեծ է քահանայապետի պատիւը, նույնպէս եւ մեծ է գործած մեղքը եւ հաւասար՝ ողջ ժողովրդի գործած մեղքին: Քանի որ Աստուած պատուիրեց քահանայի գործած մեղքերի համար մատուցել նոյն պատարագը, ինչ ամբողջ ժողովրդի գործած մեղքերի համար:



RED SUNDAY

In the Armenian Church Calendar, the third Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is known as Red Sunday.

The “red” color has been used throughout history to represent many things. One of the symbolic meanings is the blood of the martyrs who were sacrificed for Christ, His Holy Church, and their Christian faith. During the early years of Christianity, faithful followers of Jesus Christ were subjected to severe persecutions and torments. Many chose to die rather than betray their principles of life and faith, which the Incarnate God - Jesus Christ - had endowed to them and all of mankind. The psalmist writes, “Precious in the sight of the Lord is the death of the saints” (Psalms 116:15).

Today, martyrdom is far less often an occurrence in the lives of Christians, yet it does happen. However, the greater struggle is the one against sin, which we can see manifested in many ways throughout the world. The battle against wickedness and evil, which will be victorious in the end, is the current expression of the significance of Red Sunday. The Apostle Paul writes that Christ Himself endured such opposition, that we should not grow weary in our battle against wickedness. In his letter to the Hebrews, Paul says: “In your struggle against sin, you have not yet resisted to the point of shedding your blood.” (Hebrews 12:4). We must use the opportunity of Red Sunday to once again remind ourselves of Paul’s exhortation to remain steadfast in the Lord, and to continue our daily deeds of goodness and righteousness.



Փոփրիկ Ա.գատարարը

Գիշեր մը սուսկալի փոթորիկ մը պայթեցաւ: Փոփրիկ հովիւ մը որ իր ոչխարները կ'արածէր, աշխատեցաւ իր հօտը պաշտպանել այդ անձրեւախառն փոթորիկին դէմ: Բոլոր գիշերը իր կարելին ըրաւ ոչխարները ապահով պահելու համար:

Առտու կանուխ, լուսաբացին երբ իր բոլորտիքը կը դիտէր, սարսափով տեսաւ թէ գետը յորդելով քանդած է կամուրջը, եւ երկաթուղիին գիծը աւլած տարած է:

Ան գիտէր թէ քիչ վերջ նեպընթացը պիտի անցնէր անկէ, եւ անտարակոյս պիտի խորտակուէր գետին մէջ, եթէ մէկը գայն չի կեցնէր: Շուտով դէպի գետ վազեց, մեծ ջանքով անկէ անցնելու փորձ ըրաւ, ու յաջողեցաւ անցնիլ միւս կողմը ուժասպառ ու վիրաւոր վիճակի մէջ: Իր մասին խորհելու ժամանակ չունէր, քիչ վերջը պատահելիք ահաւոր դժբախտութիւնը գինք կը սարսափեցնէր: Վնականօրէն վազեց լեռան կողմը շոփեկարգը, դիմաւորելու համար, քիչ յետոյ մեքենային ձայնը լսեց, եւ ահա շոփեկառքը, որ սուրալով կու գար, բոլոր ուժով պոռալով նշան ըրաւ որպէսզի կեցնէ գայն, սակայն ի գուր. վարիչը առանց կարեւորութիւն տալու, նշան ըրաւ տղուն որ մէկդի քաշուի, իսկ փոփրիկ հովիւր իր հերոսական դիրքին մէջ հաստատ մնալով, շարունակեց իր փրկարար ջանքերը կատարել: Սրարշաւ երկաթուղին իր ընթացքը չի փոխեց, մինչեւ հասաւ փոփրիկին գտնուած տեղը: Իբրեւ վերջին նիգ, հերոս հովիւր, մեքենային առջեւ նետուեցաւ: Վարիչը անմիջապէս արգելակը իջեցուց եւ գերմարդկային նիգերով աշխատեցաւ շոփեկառքը կեցնել: Համբորդները յանկարծակիի եկած խուճապահար դուրս թափուեցան պատմառը հասկնալու համար, ոմանք բարկացան, բայց երբ տեսան կործանուած կամուրջը սարսափով լեցուեցան:

Եկէք ձեզի ցուցնեմ մեր ագատարարը, ըսաւ մեքենավարը, ու քիչ մը ետ երթալով ցուցուց անոնց փոփրիկ հերոսին ջախջախուած մարմինը: Եթէ ասիկա չի մեռներ,

մենք ամենքս ալ այսօր մեռած պիտի ըլլայինք ասիկա մեռաւ որպէսզի մենք ապրինք, այս փոքրիկ հերոսը մեր ազատարարն է:

Բոլոր ճամբորդները արցունքոտ աչքերով դիտեցին իրենց համար մեռնող տղեկը, որքան դիտեցին, այնքան իրենց սէրն ու յարգանքը աւելցաւ անոր հանդէպ:

Սիրելի ընթերցողներ, երբ այս պատմութիւնը կարդացիր, բնականաբար ազդուեցար, ասիկա մէկ մանրանկարն է կորուստ սուրացող մարդկութեան, եւ Յիսուս Քրիստոսի գոհաբերուող սիրոյն, ինչպէս այդ փոքրիկը իր կեանքը գոհեց ճամբորդները փրկելու համար, այնպէս ալ Յիսուս Քրիստոս իր անձը մահուան մատնեց մեզ փրկելու համար. միայն սա տարբերութիւնը կայ փոքրիկին եւ Յիսուսի գոհաբերութեամբ կատարուած փրկութեան գործին մէջ: Յիսուս թէպէտեւ բոլոր մարդկութեան համար փրկութիւնը պատրաստեց ու կատարեց, բայց ով որ հաւատայ կը փրկուի: Անիկա իսաչին վրայ մեռնելով իր արիւնը թափեց իբր ֆաւութիւն մեր մեղքերուն, ով որ ընդունի այսպէս ու հաւատայ կը փրկուի: Ուրեմն սիրելի ընթերցող, իսաչին վրայ մեռնող Փրկիչդ նայէ, Անոր նայէ ու պիտի ապրիս, որքան անոր նայիս, այնքան սէրդ ու յարգանքդ պիտի աւելնայ. «Անոր նայեցան ու լոյս առին» կ'ըսէ սաղմոսերգուն, անոր նայէ ու խաւարդ պիտի փարատի: Նայիլ հաւատալ ըսել է, հաւատայ ու պիտի փրկուիս: Հաւատա ու պիտի չամչնաս: Որովհետեւ Աստուած ա'յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ (Յովհ. 3.16):

Story

A Glass of Milk, Paid in Full

One day, a poor boy who was selling goods from door to door to pay his way through school, found he had only one thin dime left, and he was hungry. He decided he would ask for a meal at the next house. However, he lost his nerve when a lovely young woman opened the door.

Instead of a meal he asked for a drink of water. She thought he looked hungry so brought him a large glass of milk.

He drank it slowly, and then asked, "How much do I owe you?"

"You don't owe me anything," she replied. "Mother has taught us never to accept pay for a kindness."

He said, "Then I thank you from my heart."

As Howard Kelly left that house, he not only felt stronger physically, but his faith in God and man was strong also. He had been ready to give up and quit.

Year's later that young woman became critically ill. The local doctors were baffled. They finally sent her to the big city, where they called in specialists to study her rare disease.

Dr. Howard Kelly was called in for the consultation. When he heard the name of the town she came from, a strange light filled his eyes. Immediately he rose and went down the hall of the hospital to her room.

Dressed in his doctor's gown he went in to see her. He recognized her at once. He went back to the consultation room determined to do his best to save her life. From that day he gave special attention to the case.

After a long struggle, the battle was won. Dr. Kelly requested the business office to pass the final bill to him for approval. He looked at it, then wrote something on the edge and the bill was sent to her room.

She feared to open it, for she was sure it would take the rest of her life to pay for it all. Finally she looked, and something caught her attention on the side of the bill. She began to read the following words:

"Paid in full with one glass of milk."